

4227



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
սարտուկանությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 101 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ
ք. Երևան «Զվարթնոց» օդանավակայան, 0042

Գործունեությունը՝

«Զվարթնոց» օդանավակայանի տարածքում
մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի
վերակառուցում (բարեկարգում)
ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 101 - 24

«28» հունիս 2024թ.

«Զվարթնոց» օդանավակայանի տարածքում մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «A»-ի վերակառուցման (բարեկարգման) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Ի. Գասպարյան փողոց 34

Ներածական մաս. «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ն Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսահակ Գասպարյան փողոց 34 հասցեում նախատեսում է վերակառուցել (բարեկարգել) «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում գտնվող մագիստրալային ղեկուղին և ղեկուղի «A»-ն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 11122020-01-0124, ծածկագիրը՝ 01-007-0571-0001, 01-007-0571-0007, 01-007-0571-0009, Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 01/50-01-247-24, տրված՝ 10.05.2024թ.:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ տրանսպորտի, էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ Օգտագործում: Երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում 2 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սլաքները, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում, Տարածքը գրեթե հարթ է, թույլ կտրտված ռելիեֆով՝ ռելիեֆային փոքր թեքություններով:



տեղաբաշխված է 850-860 մետր նիշերի սահմաններում: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում՝ բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, ինչպես նաև կենդանիների բնադրավայրեր, միգրացիոն ուղիներ չեն հայտնաբերվել:

Նկարագրական մաս. «Զվարթնոց» օդանավակայանի ընդհանուր մակերեսը կազմում է 349.85797 հա: Գործունեության հիմնական նպատակն է «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում գտնվող մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի մինչև ընկած հատվածի վերանորոգումը (բարեկարգում): Նախատեսվում է քանդել գոյություն ունեող պատածքը, կառուցել նոր պատվածք՝ մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի չափերը համապատասխանեցնել ԻԿԱՕ 14 հավելվածի 4E դասիչին: Գոյություն ունեցող շահագործման ենթակա հատվածների և նոր կառուցվող պատվածքի լծորդում և ծածկույթի դասակարգման ցուցիչը համապատասխանեցնել ժամանակակից օդանավերին և կանխատեսվող երթևեկությանը: Մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի ընդհանուր երկարությունը կազմում է 1440 մետր: Աշխատանքներն ավարտելուց հետո չի թույլատրվում անհարթությունների և չխտացված տեղամասերի առկայություն: Ծածկույթի յուրաքանչյուր շերտի իրականացումից հետո ստուգվում է դրա լայնությունը, թեքությունը, խտացումը, շերտի հաստությունը: Եզրային անվտանգության գոտիների երկայնքով կառուցել խորքային համակարգ՝ համապատասխան դիտահորերով և դրենիրացնող խողովակներով: Խորքային դրենաժն իրականացվում է մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի երկու եզրերով, եզրային անվտանգության գոտու սահմանագծին՝ բացառելու համար գրունտային ջրերի ներթափանցումը պատվածքի շերտերի տակ: Աշխատանքների ընթացքում ստուգվում է բետոնի մակնիշի համապատասխանությունը նախագծային պահանջներին: Նախագծով նախատեսված է "Հայաէրոնավիգացիա" ՓԲԸ-ի կողմից շահագործվող օպտոմանրաթելային և պղնձյա մալուխների նոր խողովակաշարի և դիտահորերի կառուցում: Երկաթ-բետոնե դիտահորերի մետաղական կափարիչները պետք է համապատասխանեն EN124 F900 ստանդարտին: Խողովակաշարի ընդհանուր երկարությունը՝ 1396 մետր, խրամուղու միջին լայնությունը՝ 0,5-0,7 մետր, դիտահորերի տեղադրման խորությունը՝ 1.7 մետր: Զրամատակարարման խողովակաշարի ընդհանուր երկարությունը՝ 83 մետր է, խրամուղու միջին լայնությունը՝ 1.0 մետր, դիտահորերի տեղադրման խորությունը՝ 1.7 մետր: Հեղեղատար կոյուղի խողովակաշարի ընդհանուր երկարությունը՝ 211 մետր, խրամուղու միջին լայնությունը՝ 1.5-2.0 մետր, դիտահորերի տեղադրման խորությունը՝ 0,67-2.10 մետր: Մակնիշավորումը նախատեսված է իրականացնել ջրային հիմքով աերոդրոմային ներկերով՝ ապահովելով նախագծով նախատեսված ժամանակավոր և հիմնական մակնիշավորումները:

Մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի մինչև ընկած հատվածի վերանորոգման (բարեկարգման) տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 349.85797 հա:
- վերանորոգման (բարեկարգման) մակերես՝ 68804.10 մ²:
- կանաչապատման մակերես՝ 132848.10 մ²:



Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Շինարարության ընթացքում իրականացվելու 47453.3 մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 20672.07 մ³ օգտագործվելու է հետլիցքի համար: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո: Բնառեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ 11000 մ³ ծավալով, կենցաղային թափոններ՝ 0.05 տոննա և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 26781.23 մ³: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Երևան քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման պլան՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պարզառարանական մաս. Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը նախատեսվում է կանաչապատել խոտածածկով՝ տարածքի առանձնահատկություններից և համապատասխան ստանդարտներից ելնելով: Ոռոգումը կիրականացվի համաձայն N 0054-23 1-2-Ջ-Ս-Ե ջրօգտագործման թույլտվության:

Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:



Աշխատանքների կատարման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NOx) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Ձվարթնոց» օդանավակայանի տարածքում մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «A»-ի վերակառուցման (բարեկարգման) նախնական գնահատման հայտի հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ասֆալտ-բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 12 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
2. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:
3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:



4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսահակ Գասպարյան փողոց 34 հասցեում՝ «Ձվարթնոց» օդանավակայանի տարածքում գտնվող, մագիստրալային ղեկուղու և ղեկուղի «Ա»-ի վերակառուցման (բարեկարգման) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ

Սուսաննա Անտոնյան